(Պատճէնք.)

ԱՌ ԱՐԳՈՅ Պ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՍ.

«Շաբաթ օրը 27 փետր. գրքոյը նորէն այցելեցի. Բայց ցաւօք «սրտի կը յայտնեմ թէ, ուրիշ կերպ վիճակի մէջը տեսայ զանիկա.

«Թէ որ բանն այսպէս երթայ, հոն հայերէնի նշանն անգամ պիտի «չերևի յետոյ. Աչքիս արտասուք սրբելով կը պաղատիմ Ձեզ պ. Հո- «գաբարձուներ, մեզի հայերէն պէտք է մեր քաղաքի լեզուակորոյս «հայոց համար և քանի՜ առաւել պէտք է իրենց որդւոց՝ իրենց մայրենի «լեզուի ուսումը.

«Ո՜հ, հայ զաւակաց առջևէն իրենց հարանց լեզուի մշակութիւնը «խլել, կամ խիստ սեղմել նորա ուսումնասիրութիւնը, մի՞թէ ամբա- «րըշտութիւն, անիրաւութիւն և մանկավարժական օրինաց իսկ հակա- «ռակ վարմունք չէ՞. Երբ կարգը գայ, բերանացի պիտի բացատրեմ «Ձեզ ամեն բան. Եւ հայն սիրող ու հայու յառաջադիմութեան նա- «խանձախնդիր մեր Վեհափառ Կաթողիկոսին ալ պարտք անձին պի- «տի համարիմ իմացնել մեր գրքոյի գոյութեան սպառնացող վտանգն, «և այլն, և այլն».

ԱՌ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՍ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ԱԳՔԻՐՄԱՆԻ.

«Տեարք.

«Պատիւ ունիմ տեղեկագրովս ծանուցանել Ձեզ գրքոյի մասին այն «խոտորնակի ուղղութիւնն, զոր նշմարեցինք նորա յարկին ներքև բո- «լորովին մեր զգացմանց և փափագանացն հակառակ.

«Ինչպէս որ դուք և ժողովուրդն զմեզ «առ ժամանակեայ քննիչ «յանձնաժողով» ընտրեց իւր գրքոյին համար, փութացինք մեր պաշ- «տօնը ի գլուխ հանել. Եւ ահա, այս երրորդ անգամն է որ ուսուցչի «քովէն, աշակերտաց մէջէն և գրքոյէն կը վերադառնամ կուգամ. «Եւ, դժբաղդաբար, այն լուսոյ յարկէն փոխանակ Ձեզի լո՜յս, յո՜յս և «մխիթարութի՜ւն աւետարանելու, խաւա՜ր, յուսահատութի՜ւն և տխո՜ւր «խրողութիւնք, որ անդ, հոգւոյս մինչև խորը ազդելով, Ձեզ Ձեր գրքո- «յին վրայ ո՞ղբ կարդալ կստիպեն ինձ հիմայ.

«Թէև իւր ճակտին վրայ օտար տառերով և օտար բառերով «Հայոց «գրքոյ» անունը կը կրէ, բայց եթէ մէջը մտնես, ո՛չ Հայոց գրքոյի «շաւիղն ու շառաւիղն կը նշմարես անդ ուսուցչաց և աշակերտաց ըն- «թացից մէջը, և ո՛չ դասաւանդութեան ատեն շեշտ մի հայկական մի- «ջարկութեան ձայնի կելնէ վարժապետի հոգւոյն խորէն, որ զարնէ «հայ տղուն սրտի զգացման թելին վրայ և հրահրէ զայն ի հայութիւն.

«Դպրոցի լեզուն ըսես, Տաճ. Ռուս. և հազիւ Հայերենէ բաղա- «դրեալ, բաբելոնական լեզու մ' կը թոթովուէր անդ.

«Իսկ վարժապետի յատկութեանց և հմտութեան գալով, Աստուած «ողորմի. Սա նորեկ ուսուցիչն հրաժարեալն երբեմն, տարաժամ,

«ուսումնարանէ մը, և ևս Քիշնևի վարժարանէն, իւր կատարեալ «տգիտութեան պատճառաւ, խիստ անընդունակ և անարժան թուե-«ցաւ մեզ իւր ստանձնած փափուկ և բարձր պաշտօնին նկատմամբ։

«Արդ՝ կը մնայ մեզ միայն յուսալ Ձեր աղգասիրութենէն, Տեառքդ, «որ քիչ ժամանակէն մեր այս դպրոցի ողբալի դրութեան դարման մը «տանելով պիտի միխիթարէք անտարակոյս անդ խմբեալ Հայ մանկտին։»

Մ՝ելիոն Պրիոսոսոս-ջեան.

ՆԱՄԱԿ ՆՈՐ — ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՓՈՔՐ ՍԱԼԱՑ ԳԻՒՂԻՑ

Մեր դպրոցը 1867 ին հիմնուելէն ի վեր՝ մինչ ց1880 ամ՝ շատ յետ մնացած՝ կուսուցանուէր Հայերէն և Թուսերէն գրել եւ կարդալ միայն, իսկ այն ինչ Տեսչական ծանր և սուրբ պաշտօնը տուաւ Բարեկրօն Մինաս քահանայի Փախալեանց, անտի այսօր բարեկարգութեան մէջ գտնուեցաւ մեր Դպրոցը· մանաւանդ երբ Թեմական վերատեսուչ Գերապատիւ Սրբազանի հրամանաւ կարգեցաւ վարժապետ Պարոն Աւետիք Տ. Ա. Ջալալեանցը, պէտք է ճշմարիտն ասել, որ մեր Դպրոցը առանձին բաղդ մը ունեցաւ, նորա քաջ աշխատասիրութեամբը· իսկ այն օրից սկըսեցաւ Կրօնագիտութեան, Երգեցողութեան, Հայոց պատմութեան, Ընթերցանութեան, Գեղագրութեան, Սկզբանց Աշխարհագրութեան, Քերականութեան դասատուութիւնը կանոնաւորապէս· իսկ Ընթերցանութեան և Գեղագրութեան Ռ. և Թուաբանութեան ուսուցիչը այլ է· և այս տարի աշակերտաց տարեկան հարցաքննութիւնը եղաւ փոխանորդ Առաջնորդի Ն. Նախիջևանայ· Գեր. Սուքիաս Եպիսկոպոսի ձեռօք, և շատ յաջողակ, Նորին Սրբազնութիւնը շատ գովեց մեր աշակերտաց յառաջադիմութիւնը։

Այս հանդէսը և այս լուսաւորութիւնը 14 տարուայ ընթացքում առաջին անգամն է որ տեսանք, վասն որոյ Հոգաբարձութիւնս մեծ ուրախ սրտով ցանկացաւ խնդրել խմբագրութենէդ ընդունել մեր խնդիրը և հրամայել տպագրել պատուական Արարատ ամսագրի մի անկիւնում, ի գիտութիւն և յուրախութիւն մերազնէից։

Հոգաբարձուք { Խաչիկ Թոքալեանց
Նշան Թշլանկեանց }